



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՌԱՏԻ  
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 133

1. 11. 2011թ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զրառատի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2012 թվականի դրույքաչափերը և մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2012 թվականի դրույքաչափերը:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ յուրաքանչյուրից մեկ օրինակ ուղարկել ենք Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքնության:

Առդիր 6 էջ

Համայնքի ղեկավար՝

Գարեգին Հովանիսյան

10403-11  
03. 11. 2011



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐ ՄԱՐԶԻ ԶՐԱՌԱՏԻ  
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆՈՒ  
ՈՐՈՇՈՒՄ

«24» « Հոկտեմբերի » 2011թ.

N 04-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ  
ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի  
Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով, հիմք  
ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զրառատի  
գյուղական համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող  
վճարների 2012 թվականի դրույքաչափերը և կիրառվող զեղչերի չափերը՝  
համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան  
հաջորդող տասներորդ օրը:

ԱԿԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ԿՈՂՄ

ԴԵՄ

ՁԵՆՆՊԱԿ

Սարգսյան Դավիթ

Խաչատրյան Սամսոն

Հայրապետյան Աշոտ

Խաչատրյան Հովհաննես

Մանուկյան Ռոման

Կարապետյան Աշոտ

Զրառատ համայնքի ղեկավար

Գ. Հովհաննիսյան



ՀԱԿԵՐԱԿԱԾ  
 ԱՐՄԱՎԻՈՒՄ  
 ԶՈՒՄԻՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԶՆՈՒ  
 2011 թվականի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-ի N 04-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՈՒՄ ՍԱՐՁԻ ԶՐԱՍՈՍՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
 ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՅ ԳԱՆՁՎՈՂ  
 ԿՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԾՄԵՐՈՇ ԵՎ ԿԻՐԱՂՎՈՂ ԶԵՂԾԵՐԻ  
 ՉԱՓԵՐՈՇ

Զրարարի գույրական համայնքի ենթակայության  
 նախադրյալով հիմնարկ մանկապարտեզ հաճախող մեկ երեխայի ամսական  
 վարձավճարի չափը սահմանել 4000 (չորս հազար) դրամ:

2. Սահմանել վարձավճարի գեղջ 50 %-ի չափով հետևյալ դեպքերում.
  - 1) միննույն ընտանիքից երեք և ավելի երեխա մանկապարտեզ հաճախելու դեպքում երբորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար.
  - 2) հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների երեխաների համար.
  - 3) միակողմանի ծնողազուրկ երեխաների համար (գոհված):
  3. Երկկողմանի ծնողազուրկ երեխաներն ազատվում են վարձավճարից:
  4. Համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու դեպքում սահմանել 5000 (հինգ հազար) դրամ ծառայության վճար :
  5. Համայնքի բնակիչ համարվող անձանց լիազորագրեր տալու դիմաց ծառայությունների վճարը սահմանել
    - 1) տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու համար 5000 (հինգ հազար) դրամ.
    - 2) աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու համար 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ.
    - 3) նպատներ և կրթաթոշակներ, քաղաքացիների բանկային ավանդներ ու փոստային առաքումներ (այդ թվում դրամական և ժանրոցային) ստանալու համար 3500 (երեք հազար հինգ հարյուր):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐ ՄԱՐԶԻ ԶՐԱՌԱՏ  
Ի ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆՈՒ  
ՈՐՈՇՈՒՄ

«24» « Հոկտեմբերի » 2011թ.

N 05-Ն

ԶՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԶԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ  
ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զրառատի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2012 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱԿԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ԿՈՂՄ

ԴԵՍ

ՁԵՆՆՊԱՀ

Սարգսյան Դավիթ


Խաչատրյան Սամսոն

Հայրապետյան Աշոտ

Խաչատրյան Հովհաննես

Մանուկյան Ռոման

Կարապետյան Աշոտ



Զրառատ համայնքի ղեկավար

Գ.Հովհաննիսյան

ԱՐՄԱՎՐԻՒ ՄԱՐԶԻ  
ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՏԱՆՈՒ  
2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի  
N 5-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎՐԻՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012  
ԹՎԱԿԱՆԻ ՂՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 6000 /վեց հազար/ դրամ.

բ) սույն կետի ա. ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ,

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 /երեսունհինգ հազար/ դրամ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ.

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 /երկու հազար/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 500/ հինգ հարյուր / դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ

շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի ա. ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2000 /երկու հազար/ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 /երկու հազար/ դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 /երկու հազար / դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50.000 /հիսուն հազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի , հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 35 000 /երեսունհինգ հազար / դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 /հարյուր հազար/ դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 /երկու հազար/ դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 /մեկ հազար / դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 /յոթ հարյուր/ դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 /հինգ հազար /դրամ:

11. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար 1000 /մեկ հազար/ դրամ:

12. Գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:

13. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար գյուղապետարանի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 /երեք հազար/ դրամ: